ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1890- ական թվականներ)

ՏՈՆՈՅԱՆ Գ. Մ.

Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը սկզբնավորվեց պետրոսյան ժամանակաշրջանից, երբ ցարիզմն առաջին քայլերը կատարեց կայսրության հարավային սահմաններն ընդլայնելու և Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ[1]: Անշուշտ, Անդրկովկասն այն հենակետն էր, ուր հաստատվելուց հետո «ռուսների առաջ ճանապարհ էր բացվելու դեպի Կոստանդնուպոլիս»[2], այսինքն՝ դեպի Սև և Միջերկրական ծովեր և Մերձավոր արևելք: Ցարիզմի քաղաքական այս հավակնությունները հստակ բացահայտվեցին արդեն XIX դ. երկրորդ կեսին, արևելյան ճգնաժամի ժամանակ[3], երբ «Ռուսիան պատրաստ էր սրով կտրել գորդյան այդ հանգույցը»[4] և օսմանյան կայսրության մասնատմամբ լուծել Արևելյան հարցը[5]: Այնուհանդերձ, «Նիկոլայ I-ի այդ մեծ ձեռնարկը ձախողվեց»[6], որից հետո Ռուսաստանի գերխնդիրը դարձավ Փարիզյան հաշտության ծանր հետևանքների վերացումը: Սակայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո դարձյալ եվրոպական տերությունների ջանքերով ցարիզմի մրցակցային հավակնությունները Բալկաններում, Մերձավոր արևելքում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում նվազեցին[7]: Բեռլինի ձախողումներից հետո թվում էր, թե ցարական վարչակարգը, հրաժարվելով ավանդական քաղաքական ծրագրերից, վերանայել է իր քաղաքական մոտեցումներն այս տարածաշրջանում ու փորձել մերձենալ թուրքական սուլթանի հետ և պաշտպանել Օսմանյան կայսրության *status quo*-ն, ինչը «եվրոպական կոնցերտի» «առաքելությունն» էր: Փորձենք ճշտել, թե որն էր քաղաքական

---

[1] Պատմական այս ժամանակահատվածում ռուսական պետությանը տնտեսական, ռազմավարական և քաղաքական տեսանկյունից հրապուրում էին Կասպից ծովն ու մերձկասպյան շրջանները (Գրիգորյան Զ. Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Ե., 1960, էջ 33): Ընդ որում, թելադրողն իրանական շուկայում ռուսական առևտրական կապիտալի հաստատվելու գործոնն էր (**Борьян Б. А**., *Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М-Л., 1928).*

[2] *Армяно-русские отношения в первой трети 18 в., т. 2, ч. 1, Е., 1964, док. N 107.*

[3] **Ященко А.,** *Русские интересы в Малой Азии, М., 1916, с., 11.*

[4] **Սմբատ Բյուրատ**, Արևելյան խնդիր և Հայկական հարց, Կ. Պոլիս, 1919, էջ 6:

[5] **Чихачёв П. А.,** *Великие державы и Восточный вопрос, М., 1970, с., 30.*

[6] **Покровский М. Н.,** *Восточный вопрос, ., 19т3, . 366.* Ռուսաստանը Ղրիմի պատերազմից հետո եվրոպական կոնցերտի «թեթև ձեռքով» ոչ միայն զրկվեց սևծովյան նեղուցների հարցն իր օգտին լուծելու հնարավորությունից, այլև սպառնալիքի տակ դրվեց նրա հարավը՝ Կովկասը, Ղրիմն ու Ուկրաինան:

[7] **Голобородько Н. Н.**, *Турция, М., 1908, с., 267.*

նման շրջադարձի պատճառը, ի՞նչ գործոններով էին պայմանավորված ռուսական դիվանագիտության նոր մոտեցումները և պարզել, թե արդյո՞ք Ռուսաստանը XIX դ. 90-ական թվականներին կասեցրել էր իր մերձավորարևելյան ակտիվ քաղաքականությունը:

1880-1890-ական թվականներին ցարիզմն իր մերձավորարևելյան քաղաքականության խնդիրներում վարեց սպասողական, պաշտպանական, հաշվենկատ, երբեմն էլ հակասական քաղաքականություն: Այս քաղաքական սկզբունքները, անշուշտ, հակադրվում են լայն շրջանառություն ստացած «ցարիզմի քաղաքական սառեցման, պասսիվության» գաղափարին: Ցարական դիվանագիտությունը 1890-ական թվականներին ամենևին էլ չէր հրաժարվել իր մերձավորարևելյան քաղաքական կողմնորոշումներից: Ուղղակի նրա համար հրամայական էր այնպիսի վարքագիծ, որը կապահովեր Ռուսաստանի միջազգային անվտանգությունը և ուժերի հարաբերակցությունն ու հավասարակշռությունը Մերձավոր արևելքում: Համաեվրոպական պատերազմի և միջազգային մեկուսացման մտավախությունը ցարիզմին դրդել էր, ժամանակավորապես իր ակտիվ մերձավորարևելյան քաղաքականությունը մեղմացնելով, գործադրել «պայքարի» այլ՝ ոչ թե զենքի, այլ դիվանագիտական տարբերակը՝ հանգելով Թուրքիայի անձեռնմխելիության պահպանման գաղափարին: Սակայն քանի որ Թուրքիան պահպանում էր իր ռազմաքաղաքական կարևորությունը ռուսական դիվանագիտության համար[8], սուլթանի հետ «բարեկամություն» ստեղծելու դիվանագիտական քողի տակ հասունանում էին Ռուսաստանի ծավալապաշտական գաղափարները և հարձակողական նպատակները: Այսպես, Ալեքսանդր III-ը, ելնելով Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիդովի 1892 թ. Փետրվարի 7-ի հաղորդագրությունից, նշում էր. «...Մեր դերն ամենաանշնորհակալն է, անհնար է փրկել մի մարդու (Թուրքիան - Տ. Գ.), որն ինքն է մահ փնտրում: Թուրքիան կորած երկիր է. ամեն ինչ վայր է ընկնում նրա ձեռքից և միայն ալարկոտները չեն հավաքում մնացորդները»[9]:

Ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության փոփոխությունը պայմանավորված էր միջազգային բարդ իրավիճակով, ռազմաքաղաքական խմբավորումների ձևավորմամբ ու տարածաշրջանի հիմնահարցերի լուծման հնարավոր տարբերակների վրա դրանց ազդեցությամբ, Ռուսաստանի հեռավորարևելյան քաղաքականության սկզբնավորմամբ ու ծավալմամբ, Թուրքիայում Անգլիայի գերակշիռ դիրքի դեմ պայքարով, մյուս մեծ տերությունների հետ մրցակցությամբ, օսմանահպատակ ժողովուրդների ազատագրական պայքարով ու Ռուսաստանում դրա տարածվելու մտավախությամբ և այլն:

---

[8] Այդ են վկայում ռուս պաշտոնյաների հաղորդագրությունները *(Восточный вопрос во внешней политике России, конец 18-го и начало 20-го вв., М., 1978;* ***Тунян В. Г.,*** *Россия и армянский вопрос, Е., 1998)* և ռուսական մամուլի հրապարակումները (տե՛ս **Тунян В. Г.**, *Армения, Россия 1878-1897 гг., Е., 1997):* Ցարական դիվանագիտությունը մասնավորապես կարևորում էր կայսրության փոքրասիական հատվածի ռազմավարական նշանակությունը (**Елисеев А. В.**, *Значение Малой Азии для России (Исторический вестник, 1888, т. 32, с. 142).*

[9] **Ламздорф В. Н.**, *Дневник 1891-1892 гг., М-Л., 1934, с. 289.*

XIX դ. վերջին գաղութատեր մեծ տերությունները ձգտում էին ձեռք բերել հումքի նոր աղբյուրներ, սպառման նոր շուկաներ, քաղաքական ազդեցության նոր ոլորտներ և վերաբաժանել աշխարհը: Նախապայմաններ էին ստեղծվում ռազմաքաղաքական խմբավորումների առաջացման համար[10], որոնց առկայությունը փոխում էր ուժերի հարաբերակցությունը ոչ միայն Եվրոպայում, այլև Ասիայում և Աֆրիկայում:

Ռուս դիվանագետներն արդարացված մտավախություն ունեին կայսրության տնտեսական ու քաղաքական հետագա զարգացման և մեկուսացման առնչությամբ, քանի որ ակնհայտ դրսևորվում էին եռյակ համաձայնության երկրների և վերջիններիս հետ երբեմն համագործակցող Մեծ Բրիտանիայի հետ ունեցած հակասությունները: Այս ամենը պայմանավորեց Ռուսաստանի ու Ֆրանսիայի մերձեցումը և երկու պետությունների համագործակցությունը, այդ թվում՝ Մերձավոր արևելքում: Ֆրանսիայի կառավարությունը, ինչպես գրում էր ռուսական արտաքին գործերի նախարար Ն. Գիրսը, անշեղորեն Ռուսաստանի հետ էր, «ձեռք ձեռքի»[11]: Թուրքիայի հանդեպ երկու պետությունների դիրքորոշումը, փաստորեն, համընկնում էր՝ հաջողությամբ հակադրվելով Մերձավոր արևելքում Անգլիայի և Գերմանիայի ազդեցության տարածմանը[12]: «Ռուսաստանի և Ֆրանսիայի խնդիրը կայանում էր նրանում, որ ապահովեին սուլթանի գործողությունների լիակատար ազատություն, նրան ուժ հաղորդեին արտաքին խարդավանքների դեմ պայքարում: Որևէ խառնաշփոթության դեպքում երկու պետություններն էլ պատրաստ էին աջակցել Թուրքիային. երկուսն էլ փորձում էին պահպանել Օսմանյան կայսրության գոյություն ունեցող անձեռնմխելիությունն ու ամբողջականությունը»[13]:

Ռուսաստանը կրկին բարդ և հակասական դիրքորոշում զբաղեցրեց մերձավորարևելյան հերթական ճգնաժամի գագաթնակետին, երբ Աբդուլ Համիդը, հերթական անգամ օգտագործելով միջազգային հակասությունները, ձեռնամուխ եղավ փոխհատուցելու պետության տարածքային կորուստները[14] և ուժեղացնելու օսմանահպատակ ժողովուրդների ճնշումները:

Դա առավել ծանր անդրադարձավ արևմտահայության վրա: Սուլթանը փորձում էր «լուծում գտնել» Հայկական հարցին, որը տասնամյակներ շարունակ շահարկվում էր «խաղաղասեր» Եվրոպայի կողմից: 1891 թ. «համիդիե» հեծելազորի կազմավորումով Աբդուլ Համիդը նպատակադրվել էր բնաջնջել հայությանը: Թուրքական իշխանություններին հաջողվեց Արևմտյան Հայաստանը վերածել «անարխիկ երկրի և բնակչությանը հարկադրել ջարդերից ու

---

[10] Խոսքը գերմանա-ավստրո-իտալական և ռուս-ֆրանսիական միությունների մասին է:

[11] *Восточный вопрос во внешней политике России (конец 18-го и начало 20-го вв.), с. 258.*

[1m] **Манфред А. З.,** *Внешняя политика Франции 1871-1891гг., М., 1952, с. 521.*

[13] *Архив внешней политики Российской империи (АВПРИ), ф. Политархив, 1896, д. 3449, л. 1 об. - 2.*

[14] 1881 թ. Ֆրանսիան զավթեց Թունիսը, 1882-ին Անգլիան հաստատվեց Եգիպտոսում, 1885 թ. Արևելյան Ռումելիան միացվեց Բուլղարիային, 1897-ին անկախություն ձեռք բերեց Կրետեն:

բռնություններից փրկություն գտնել ...արտագաղթի և զինված պայքարի մեջ»[15]: Ոչ պատահաբար, թուրքական բռնություններին հակադրվեց անգլիական հասարակության, իսկ ավելի շուտ՝ կառավարող շրջանների ծավալած հակաթուրքական քարոզչությունը[16]: Սրելով Արևելյան հարցը, որի բաղկացուցիչ մասն էր Հայկական հարցը, և շահարկելով հայկական կոտորածների ու բարեփոխումների խնդիրը՝ անգլիական կառավարող շրջանները փորձում էին Օսմանյան Թուրքիայում ամրապնդել Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի խաթարած դիրքերը և իրենց զավթողական նկրտումները քողարկելով՝ հնարավորության դեպքում Եգիպտոսի հարցում համաձայնության գալ սուլթանի հետ: Դա էր պատճառը, որ Անգլիան այդ ժամանակ հանդես էր գալիս որպես կոտորվող հայության «բարեկամ» ու համառորեն առաջ քաշում հայկական բարեփոխումների հարցը:

Սակայն թյուր է այն կարծիքը, թե Ռուսաստանը, նշված ժամանակահատվածում արժեքավորելով ռուս-թուրքական մերձեցումը, սուլթանի օգնությամբ նեղուցների անձեռնմխելիության ապահովումն ու տարածաշրջանում իր ազդեցության ուժեղացումը, անտեսում էր Հայկական հարցը, բորբոքում սուլթանի հակահայկականությունը՝ անտարբեր գտնվելով հայկական ջարդերի հանդեպ: Իրականում ռուսական դիվանագիտությունը Հայկական հարցին անդրադառնում էր առաջին հերթին ռուս-անգլիական մրցակցության տեսանկյունից: Ցարիզմը շահագրգռված չէր հայկական խնդրում, այն է՝ Թուրքիայի ներքին գործերում անգլիական ազդեցության աճին, ինչը հարվածում էր Ռուսաստանի կենսական շահերին և հարցականի տակ դնում նախ և առաջ նեղուցների վերահսկողության հարցը: «Անգլիական քաղաքականության ձեռքին,- գրում էր ռուս դիվանագետ Մ. Պրժևալսկին,- Հայկական հարցի բորբոքումը հանդիսանում է իր շահերը հետապնդելու ժամանակ թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու միջոցներից մեկը»[17]: Այսպես, երբ լուրեր տարածվեցին, թե Անգլիայի լիբերալ կառավարությունը Գլադստոնի վարչապետությամբ պատրաստվում է սուլթանից հայերի համար պահանջել «ինքնավար իրավունքներ», ցարական կառավարությունը վճռականորեն դեմ արտահայտվեց, որ իր կայսրության սահմանների վրա, այն է՝ Արևմտյան Հայաստանում, կազմավորվեր «անկախ» պետություն՝ հայկական ինքնավարություն, որը ձեռնտու էր Մեծ Բրիտանիային՝ ռուսական առաջխաղացումը Մերձավոր արևելքում կանգնեցնելու, նրա ակտիվությունը զսպելու համար[18]:

---

[15] **Тунян В. Г.**, *Россия и армянский вопрос, с. 425.*

[16] Անգլիան, որ ժամանակին հանդես էր գալիս Օսմանյան կայսրության պաշտպանության սկզբունքով, 19-րդ դ. 80-90-ական թթ. փոխեց իր ռազմավարությունը՝ հետապնդելով նվաճողական նպատակներ, մասնավորապես Կիպրոսի և Եգիպտոսի նկատմամբ:

[17] *АВПРИ, ф. Посольство в Константинополе, д. 3178, л. 409; Секретное донесение М. Пржевальского от 29 сентября 1895.*

[18] **Ներսիսյան Մ. Գ.,** Պատմության կեղծարարները, Ե., 1998, էջ 88:

Սասունի 1894 թ. հայկական սպանդը նոր թափ հաղորդեց մեծ տերությունների մրցապայքարին: Առաջինն այդ ոճրագործության խաղաքարտն օգտագործեց Մեծ Բրիտանիան՝ առաջարկելով հրավիրել միջազգային հանձնաժողով՝ Սասունի դեպքերն ուսումնասիրելու նպատակով: Ռուսական կառավարությունը, չցանկանալով այդ հարցի լուծումը թողնել Անգլիայի քննարկմանը, ընդունեց բրիտանական կառավարության առաջարկը՝ միաժամանակ հստակեցնելով հյուպատոսական իրավասությունների շրջանակները և իր գործողությունները համաձայնեցնելով Ֆրանսիայի հետ[19]: Շահագրգռված լինելով «Արևելքի արագ խաղաղեցմամբ»՝ ռուսական դիվանագիտությունն ընտրեց որոշակի վարքագիծ՝ մի կողմից թույլ չտալ Սասունի դեպքերի քննությանը հաղորդելու քաղաքական բնույթ[20], իսկ մյուս կողմից՝ «չլարել հարաբերություններն ինչպես հայերի, այնպես էլ թուրքական հանձնաժողովի հետ»[21]: Ռուսական դեսպանն Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ մասնակցեց արևմտահայկական վիլայեթներում անցկացվելիք բարենորոգումների նախագծի մշակմանը, իսկ 1895 թ. մայիսի 11-ին նախագիծը հանձնվեց սուլթանական կառավարության հաստատմանը: Անգլիական կառավարող շրջանները 1894 թ. դեկտեմբերին Ռուսաստանին առաջարկեցին համաձայնության նոր տարբերակ, ըստ որի՝ ռուսական զորքերը հաստատվելու էին Թուրքիայում, իսկ Անգլիան անարգել գործելու էր Եգիպտոսում: Ցարական կառավարությունը, թանկ գնահատելով ռուս-ֆրանսիական համաձայնությունը և բացահայտելով Լոնդոնի «սադրիչ ծրագիրը», որը Ռուսաստանին մղում էր մեծ պատերազմի, հրաժարվեց «հրապուրիչ» առաջարկից[22]: «...Ընտրել գործուն մեթոդներ՝ Օսմանյան կայսրության կողմից համաձայնեցված բարենորոգումների անցկացումն ու ներքին հանգստության վերահաստատումը հեշտացնելու համար»[23]. այսպիսին էր ցարիզմի քաղաքական բանաձևը: Սուլթանի կողմից ռեֆորմների անցկացումը ձգձգվեց, ինչն էլ Մեծ Բրիտանիային ստիպեց Թուրքիայի հետ խոսել «ուժի լեզվով»՝ զինված միջամտության կոչ անելով տերություններին[24]: Անգլիայի կրկին դրսևորվող նվաճողական ծրագրերն ակնհայտ էին Ռուսաստանին և Ֆրանսիային: Պատահական չէ, որ Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Նելիդովը 1895 թ. հունիսին ցարին գրում էր, որ Անգլիան Հայկական հարցի օգնությամբ նպատակ ունի Ռուսաստանին ընդհարման մղել Թուրքիայիհետ[25]: Տերությունները ամեն կողմից միջոցառումներ էին ձեռնարկում Թուրքիայի մասնատման

---

[19] *АВПРИ, ф.Политархив, 1894-1895гг., д. 3435, лл. 50-52, л. 95, ф. Политархив, 1894 г., д. 34-35, лл. 169-172 и об.*

[20] **Ламздорф В. Н.,** *Дневник 1894-1896гг., М., 1991, с. 122. Донесение Нелидова от 5 января 1895 г.*

[21] *Восточный вопрос…, с. 265.*

[22] *Նույն տեղում, էջ 264-265:*

[23] **Ламздорф В. Н.,** *Дневник 1894-1896 гг., с. 310.*

[24] **Բայրամյան Լ.Ա.,** Հայկական հարցը և Անգլիան 1890-ական թթ. (Պատմա-բանասիրական հանդես, 1979, N 1, էջ 28):

[25] *АВПРИ, ф. Политархив, 1895 г., д. 3447, л. 228. Нелидов-Николаю, II июня 1895 г., N 71.*

դեպքում առավելագույն շահույթ ապահովելու համար[26]: Ահա թե ինչու նրանք մերժեցին Թուրքիայի ներքին գործերին միջամտելու ռազմական տարբերակը: Սուլթանը հարկադրված հաստատեց բարենորոգումների «մայիսյան» նախագիծը, թեև այն իրագործել դարձյալ չէր շտապում: Աբդուլ Համիդի այս քայլը Ռուսաստանի կառավարող շրջանները գնահատեցին որպես հայկական ճգնաժամի հարթեցում և անգլիական ակտիվության կասեցում: Ռուսաստանի հիմնական նպատակն էր «հայերի անվտանգության և բարեկեցության երաշխիքներ ստեղծելով՝ միաժամանակ կանխել Թուրքիայի անկումը»[27]: Մեծ տերությունները հիմնականում գոհացած էին[28], թեև զանգվածային ջարդերը շարունակվում էին: Միայն 1896 թ., երբ Վանի ու Կ. Պոլսի արյունոտ դեպքերը բորբոքեցին համաշխարհային հանրության կարծիքը, նրանք բավարարվեցին սուլթանին ձևականորեն կոլեկտիվ նոտա հղելով՝ երկրում կարգուկանոն հաստատելու համար[29], դարձյալ անհետևողական գտնվելով բարենորոգումների իրագործման հարցում: Այս իրավիճակում էլ ռուսական դիվանագիտությունը հավատարիմ էր մնում Թուրքիայի *status quo*-ն պաշտպանելու սկզբունքին: Փաստորեն, անգլիական գործոնով պայմանավորված՝ ռուսական կառավարող շրջանները հաշվենկատ վերաբերմունք էին դրսևորում Հայկական հարցի նկատմամբ, «հանդուրժում» հայկական կոտորածները և սուլթանի գործելակերպը, ձգձգում հայկական բարենորոգումների խնդիրը[30]:

Անգլիական մրցակցությունից զատ, ռուսական արքունիքն անհանգըստացած էր հայկական հուզումներից՝ մտավախություն ունենալով, որ արևմտահայերի ազատագրական շարժումը կարող է արձագանքներ գըտնել արևելահայության մեջ. «...հայությանն առնչվող գործերում համերաշխություն կա Ռուսաստանի և Թուրքիայի միջև. ներքաղաքական իրավիճակից ելնելով՝ մենք, ինչպես և թուրքական կառավարությունը, չենք կարող հանդուրժել հայ ազգաբնակչության ազգային ձգտումների զարթոնքը»,- նշում էր ռուսաց արտգործնախարար Ն. Գիրսը[31]: Այսպիսով, XIX դ. 90-ական թթ. Հայկական հարցում ռուսական քաղաքականության նոր ռազմավարության հիմքում ընկած էին մի շարք գործոններ՝ հայ ազատագրական շարժման ծավալման և Ռուսաստանի սահմանին ինքնավար Հայաստան՝ «երկրորդ Բուլղարիա» ունենալու մտա-

---

[26] **Ламздорф В. Н.**, *Дневник 1894-1896 гг., с. 252.*

[27] Նույն տեղում, էջ 309-310:

[28] 1895 թ. վերջերից բրիտանական կառավարող շրջանները համաեվրոպական մեկուսացման մտավախությամբ «մեղմացրին» իրենց ակտիվ ռազմավարությունը Հայկական հարցում (**Բայրամյան Լ. Ա.,** Հայկական հարցը և Անգլիան 1890-ական թթ. (Պատմա-բանասիրական հանդես, 1979, N 1, էջ 28-29):

[29] **Тунян В. Г.**, *Россия и армянский вопрос, с. 160-162.*

[30] Հայկական բարեփոխումների հարցը կարող էր լուծվել Բեռլինի վեհաժողովին մասնակից մեծ տերությունների համաձայնությամբ, ինչը անցանկալի էր Ռուսաստանի համար. Հայկական հարցի նման միջազգայնացման դեպքում ցարիզմը ստիպված կլիներ հակազդել ոչ միայն Անգլիային, այլև մյուս տերություններին:

[31] **Кургинян Е. А.,** *Европейская дипломатия и армянский вопрос в 90-ых гг. 19 в. (Учёные записки Московского обл. пед. института, М., 1968, т. 191, вып. 9, с. 216).*

վախությունը, տարածաշրջանում անգլիական ազդեցության աճի անցանկալիությունը, դրան պատվար ստեղծելու բնական ձգտումը և տարածաշրջանում կայունություն հաստատելու մղումը:

XIX դ. 90-ական թվականների մերձավորարևելյան ճգնաժամում Հայկական հարցը կարևոր, բայց ոչ միակ հիմնախնդիրն էր: Եվրոպական տերությունների քաղաքական շահերը բախվում էին նաև Կրետեում, Բալկաններում և, իհարկե, նեղուցների խնդրում: Վերջինս թվարկած հարցերի կապակցող հանգույցն էր, մրցապայքարի հիմնական շարժառիթը: Որևէ մեծ տերություն այս կամ այն ձևով փորձում էր տեր կանգնել Բոսֆորին ու Դարդանելին: Ռուսաստանը ևս կարևորում էր նեղուցները, որոնք ճանապարհ էին հարթում ոչ միայն դեպի Միջերկրական ծով ու դրան հարող շրջաններ, այլև «աշխարհի բոլոր ծովեր»[32]: Ինչպես արդեն նշել ենք, Ռուսաստանի քաղաքական նման նկրտումները չէին կարող չհանդիպել արգելքների[33], մասնավորապես Անգլիայի կողմից, որի համար Բոսֆորում ցարիզմի հաստատումը մի կողմից կնշանակեր Օսմանյան կայսրությունում անգլիական տնտեսական և քաղաքական դիրքերի թուլացում, իսկ մյուս կողմից կսպառնար բրիտանական կայսրության «մարգարիտ» Հնդկաստանին: Կ. Պոլսի գրավումով Ռուսաստանը կընդլայնվեր դեպի հարավ՝ Պարսից ծոց, Պարսկաստան, ապա և Հնդկաստան: Սակայն միջազգային իրավիճակից[34] ելնելով՝ XIX դ. 90-ական թվականներին Մեծ Բրիտանիան նեղուցների հարցում ևս փոխեց իր ռազմավարությունը՝ բազմիցս առաջ քաշելով Թուրքիայի անդամահատման հարցը մերթ Գերմանիայի, մերթ Ռուսաստանի հետ: Ի հակակշիռ Անգլիայի՝ ինչպես տեսանք, ռուսական դիվանագիտությունը հրաժարվեց «ավանդական» սկզբունքներից՝ միաժամանակ ընդդիմանալով իր հա-մար կենսական նշանակություն ունեցող տարածքներում այլ պետությունների գերիշխանության հաստատմանը: Սա ամենևին էլ չէր նշանակում, որ նեղուցները կորցրել էին իրենց կարևորությունը ցարիզմի համար: Ընդհակառակը, Բոսֆորն ու Դարդանելը պետք է գտնվեին Ռուսաստանի վերահսկողության ներքո, քանի որ դրանք

---

[32] **Ротштейн Ф. А.,** *Международные отношения в конце 19 в., М.-Л., 1960, с. 164.*

[33] Եվրոպական տերություններից Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան, Գերմանիան ևս չէին ողջունում ցարիզմի առաջխաղացումը, ինչը վտանգում էր նրանց գաղութատիրական նպատակները:

[34] Անգլիական իմպերիալիզմը նպատակադրվել էր ստեղծել աֆրո-ասիական հսկայածավալ պետություն: Այս ծրագիրն իրագործելու համար Մեծ Բրիտանիան պետք է ամրանար Եգիպտոսում, Սուեզում (ծովային ուղի), Հյուսիսային Արաբիայում ու Պարսից ծոցում: Ուստի կայսրությունը «մեծ կարևորություն չէր տալիս նեղուցներին, թեև ողջունում էր եվրոպական տերությունների ու Ռուսաստանի միջև Կ. Պոլսի համար տարաձայնությունները, ինչը կթուլացներ ռուսական դիմադրությունն Արևելյան Ասիայում» (**Хальгартен Г.**, *Империализм до 1914 г., М., 1961, с.228):* Եվրոպական մեկուսացումից խուսափելով՝ անգլիական դիվանագետները ձգտում էին դաշինք կնքել իրենց մրցակիցներից որևէ մեկի հետ և նրան հրահրել ընդդեմ հակառակորդ ուժերի:

ռուսաց «տան դռներն էին», և «իրական տերը պահանջում էր այդ դրռների բանալիները»[35]:

Մի շարք հարցերում, մասնավորապես նեղուցների, կայսրության գոյության պահպանման, համընկնում էին նաև ցարական կառավարության և Բ. Դռան քաղաքական շահերը: Ռուսաստանն ուղղակի շահագրգռված չէր բացահայտ հակամարտելու արևմտաեվրոպական տերությունների հետ, քանի որ «թանկ» էր վճարել Թուրքիայի հետ բարյացակամ հարաբերություններ հաստատելու համար: «Ռուսաստանը,- գրում էր անգլիացի հայտնի հրապարակախոս Ու. Ստեդը,- ի վիճակի չէ տիրանալ Բոսֆորին, այդ իսկ պատճառով նրան ձեռնտու է պաշտպանել նրա *status quo*-ն: ...Նեղուցները պաշտպանելու փոխարեն, նա հանձնում է դրանք մի պետության, որ փաստորեն նրա գրպանում է»[36]:

XIX դ. 90-ական թվականների մերձավորարևելյան ճգնաժամի օրերին կշեռքի նժարների վրա էին դրված թե՛ նեղուցների գրավման և թե՛ Թուրքիայի *status quo*-ի հարցերը: Առաջինի կողմնակիցներից էին Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Նելիդովը և ռազմական շրջանները: Հայկական կոտորածները և անգլիական նավատորմի նեղուցներ ներխուժելու կարծեցյալ վտանգն օգտագործելով՝ դեսպանը 1892 թ. Ալեքսանդր II ցարին էր ներկայացրել Բոսֆորի գրավման նախագիծը. «...Հիմք կա մտածելու,- գրում էր նա,- որ անգլիացիները հարմար առիթի են սպասում, որպեսզի նույն անամոթությամբ, ինչպես նրանք գործեցին Եգիպտոսում, հանկարծակի ներխուժեն Դարդանել և հայտնվեն Կ. Պոլսի առջև, փակեն մեզ Սև ծովում և նախապատրաստեն Արևելյան հարցի լուծումը մեր շահերին հակասող, արևմտյան ձևով»[37]: Դեսպանն առաջարկում էր Կ. Պոլսում լուրջ հուզումների դեպքում ռուսական էսկադրան ուղղել Բոսֆոր, իսկ հնարավորության դեպքում նաև Դարդանել, ապա Թուրքիայի հանդեպ հաստատել հովանավորություն: Նելիդովյան առաջարկությունների հետ ծանոթանալով՝ Ն. Գիրսը նշեց, որ դեսպանի առաջարկած ագրեսիվ ծրագիրը «կհամախմբի ոչ միայն (Ռուսաստանի) թշնամիներին, այլև Ֆրանսիան էլ չի հետևի իր դաշնակցին»: Ալեքսանդր III-ը համաձայնվեց Ն. Գիրսի հետ: Քանի որ Ռուսաստանը ծովում զիջում էր անգլիական նավատորմին, իսկ ցամաքում՝ գերմանական ու ավստրիական բանակներին, պատրաստ չէր ռազմական մեծ բախման[38]: Նմանատիպ ծրագիր Ա. Նելիդովը ներկայացրեց նաև 1896 թ.: Քաղաքական փորձառություն չունեցող Նիկոլայ II-ը սկզբում դրան հավանություն տվեց, սակայն հետագայում հեռատես գործիչների ճնշման ներքո տեղի տվեց, ինչով և փաստեց «դիվանագիտության ասպարեզում

---

[35] **Киракосян А.**, *Англо-русские переговоры 1896 г. и армянский вопрос (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, N 69).*

[36] *Русский вестник, 1889, т. 201, с. 92.*

[37] **Хвостов В.,** *Проблема захвата Босфора в 90-ых гг. 19 в. (Историк-марксист, 1930, т. 20, с. 107).*

[38] Նույն տեղում, էջ 108:

տարօրինակ տպավորություն թողնող իր առաջին քայլերը»[39]: Երկրորդ ուղու կողմնակիցներից էին արտգործնախարարներ Ն. Գիրսը, Ա. Լոբանով-Ռոստովսկին և ֆինանսների նախարար, ռուսական կապիտալի պաշտպան Ս. Վիտտեն: Ռուսական դիվանագիտության «կախարդական շրջանում» հայտնվելը, երբ ցարիզմն օբյեկտիվորեն ձգտում էր տեր կանգնել նեղուցներին, իսկ ընձեռված հնարավորության դեպքում հրաժարվում այդ մտքից, որպեսզի հետագայում զենքի և զոհերի գնով իրագործեր իր նպատակները, պայմանավորված էր ժամանակի քաղաքական զիգզագներով: Ակնհայտ էր, որ ձևավորված երկու հակամետ քաղաքական խմբավորումների անդամ պետությունները նախագծում էին հնարավոր համագործակցության նոր տարբերակներ: Ռուսաստանի՝ Կ. Պոլիս տանող ճանապարհին կանգնած էին թե՛ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան ու Անգլիան և թե՛ դաշնակից Ֆրանսիան: Վերջինս Ռուսաստանին համախոհ և համաքայլ էր կրետական, բալկանյան ու հայկական հարցերում, բայց ոչ նեղուցների խնդրում: Չէ՞ որ Ֆրանսիան, ի տարբերություն Ռուսաստանի, Մերձավոր արևելքում առաջնորդվում էր ֆինանսական շահերով. երեք միլիարդ ֆրանկից ավելի գումար էր ներդրված թուրքական փոխառությունների և արդյունաբերության մեջ[40]: Կասեցնելով Ռուսաստանի՝ Կ. Պոլսում մենիշխան հաստատվելու ծրագրերը և պաշտպանելով նեղուցների անձեռնմխելիությունը՝ Ֆրանսիան երաշխավորում էր այդ գումարի անվտանգությունը: «Ձեր նոր քաղաքականությունը,- հայտարարում էր Հանոտոն,- ձգտում է ապահովել Ռուսաստանի մենիշխանությունը Թուրքիայում... Գնահատել եք դուք արդյո՞ք բոլոր դժվարությունները: ...Չմոռանաք, որ դուք գործ ունեք հզոր ուժերի հետ: Համոզված եղեք, որ եթե անգամ ձեզ թույլ տան մտնել Կ. Պոլիս, ապա միայն նրա համար, որպեսզի ձեզ թույլ չտան այդտեղից հեռանալու: ...Նույն օրն անգլիացիները Դարդանելում կստեղծեն Ջիբրալթար և կփակեն ձեր բոլոր ճանապարհները»[41]: Ռուսական դիվանագիտությունը ռուս-ֆրանսիական դաշինքի կազմալուծման և համաեվրոպական պատերազմի վտանգի սպառնալիքի տակ հրաժարվեց «նելիդովյան» ծրագրերից և ընտրեց խաղաղությունը: Եթե ասվածին հավելենք, որ չնայած ցարական կառավարության սևծովյան նավատորմի ուժեղացման 1881 թ. և 1895 թ. ծրագրերին՝ Ռուսաստանը պատրաստ չէր բախվելու Անգլիայի հետ[42], ապա կբացահայտվեն ռուսական մերձավորարևելյան քաղաքականության մեղմացման ժամանակավոր բնույթը և նեղուցների հարցում նման դիրքորոշումը:

Քննվող ժամանակաշրջանում Ռուսաստանն ակտիվ գործում էր նաև ծայր արևելքում: Նրա արտաքին քաղաքականության մերձավորարևելյան և հեռավոր-արևելյան ուղղությունները փոխկապակցված էին և պայմանավորված մեկը մյուսով: Պատահական չէ, որ Ռուսաստանը, Մերձավոր արևելքում հանդիպելով

---

[39] *История дипломатии, т. 2, М., 1963, с. 342-343.*

[40] **Хвостов В.**, *նշվ. աշխ., էջ 121:*

[41] Նույն տեղում, էջ 125-126:

[42] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 390, ց. 1, գ. 61, թ. 1:

եվրոպական մրցակիցների հակազդեցությանը և կորցնելով զենքով ձեռք բերածը, դեռևս 1880-ականներին ուրվագծեց Հեռավոր արևելքում հաստատվելու հեռանկարը[43]: Այսպես, 1890-ականների սկզբներին այն հիմք դրեց սիբիրյան երկաթուղու կառուցմանը, որը «նոր ուղի և նոր հորիզոններ էր բացելու համաշխարհային առևտրի համար, իսկ Ռուսաստանի համար ունենալու էր տնտեսական, ռազմա-պաշտպանական նշանակություն»[44] և սիբիրյան հեռահաղորդագրությունը կապեց չինականի հետ, ինչով խլեց անգլիական մենատիրությունն այս ասպարեզում: Ռուսական դիվանագիտությունը միջնորդի դեր ստանձնեց նաև ճապոնա-չինական պատերազմում՝ վերանայելով Սիմոնոկիի հաշտությունը և պահպանելով Չինաստանի ամբողջականությունը: Ռուս-ֆրանսիական կապիտալի համագործակցությամբ բացվեց ռուս-չինական բանկ, իսկ վերջինս էլ ձեռք բերեց մանջուրական երկաթուղու կառուցման կոնցեսիաներ և հնարավորություն ստացավ շահագործելու տարածաշրջանի հանքային ռեսուրսները: Ակնհայտ էր, որ Մանջուրիայի տնտեսական շահագործումով Ռուսաստանը ճանապարհ էր հարթում դեպի Չինաստանի հարավ, ուր կենտրոնացած էր այդ երկրի հարստության մեծ մասը: Մինչ ֆինանսների նախարար Ս. Վիտտեն խորհում էր երկաթուղու և բանկային կապիտալի միջոցով Չինաստան «խաղաղ ներթափանցման» մասին, ռազմական և ծովային նախարարները իրականացում էին անմիջական գործողություններ՝ ստեղծելով ռազմական ամրակետեր, ուժեղացնելով խաղաղօվկիանոսյան նավատորմը, ամրապնդելով բանակը[45]: Արդեն 1898 թ. ռուսները հաստատվեցին Պորտ-Արտուր ու Տալիենվան (հետագայում Դալնիյ) նավահանգիստներում և Լաո Դուն թերակղզու հարավում, ինչով ապահովվում էր Ռուսաստանի գերակայությունը թե՛ Չինաստանում և թե՛ Կորեայում: Այս ձեռքբերումներն ունեին ոչ միայն առևտրական, այլև ռազմավարական նշանակություն: Պորտ-Արտուրը վերածվելու էր բացառապես ռազմական հանգրվանի, ուր, բացի ռուսական ու չինական նավերից, այլ նավերի մուտքն արգելվելու էր[46]: Ռուսաստանի հետաքրքրությունները Պորտ-Արտուրով չէին սահմանափակվում. ցարիզմը «հավակնում էր իր ձեռքը դնել Չինական կայսրության զգալի մասի վրա և նրան դուրս մղել համաշխարհային առևտրական շրջանառությունից»[47]: Ինչպես Մերձավոր, այնպես էլ Հեռավոր արևելքում Ռուսաստանի ակտիվացումը հանդիպեց մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի դիմադրությանը: Ռուսաստանը, Միջին Ասիայում և Հեռավոր արևելքում ծավալվելով, վաղ թե ուշ մոտենալու էր Մեծ Բրիտանիայի հնդկական սահմանին, ինչը Լոնդոնը կատաղի պաշտպանում էր անգամ Մերձավոր արևելքում:

---

[43] Նույն կերպ էր բացատրվում Ռուսաստանի ակտիվացումը Պարսկաստանում, Աֆղանստանում, Տիբեթում ու Միջին Ասիայում (**Руир**, *Англо-русское соперничество в Азии в 19 в, М., 1924,* **Тарле Е.**, *Сочинения, т. 5, М., 1958).*

[44] **Ротштейн Ф. А.,** նշվ. աշխ., էջ 254:

[45] Նույն տեղում, էջ 378:

[46] **Покровский М. Н.**, *Дипломатия и войны царской России в 19 столетии, М., 1923, с. 366.*

[47] **Хвостов В.**, *նշվ. աշխ., էջ 105:*

Այսպիսով, Ռուսաստանը Հեռավոր արևելքում մի կողմից փոխհատուցում էր մերձավորարևելյան կորուստները, իսկ մյուս կողմից՝ իր տնտեսական, ֆինանսական ու քաղաքական ծրագրերի իրագործման համար պարարտ հող գտնում: Զուգահեռներ անցկացնելով՝ նկատենք, որ հեռավորարեվելյան քաղաքականության գագաթնակետը համընկնում էր մերձավորարևելյան ճգնաժամի խորացմանը, ինչով և մասնավորապես «արդարացվում» էր ցարիզմի «պասսիվությունը» Մերձավոր արևելքում: Հետևաբար, այսպես կոչված «սառեցումը» և ռուս-թուրքական մերձեցումը խիստ պայմանական էին: Ցարական դիվանագիտությունը քննվող ժամանակաշրջանում ոչ մի վայրկյան անգամ չէր մոռանում նեղուցների մասին և իր տեսադաշտում էր պահում մերձավորարևելյան խնդիրները: Ռուսաստանի հեռավորարևելյան ձեռնարկումները ոչ այլ ինչ էին, եթե ոչ Մերձավոր արևելքում ազատ գործելակերպ ապահովելու միջոց: Մ. Պոկրովսկու պատկերավոր բնութագրմամբ Հեռավոր արևելքը շրջանցային ուղի էր դեպի Կ. Պոլիս[48]: Ցարական արքունիքը, խոսելով Պորտ-Արտուրի մասին, մտահոգված էր Կ. Պոլսով: Ռուսաստանին անհրաժեշտ էր ամրանալ Հեռավոր արևելքում, որպեսզի հեշտանար պայքարը Մերձավոր արևելքում. միաժամանակ «մարսել» Կորեան, Մանջուրիան և Կ. Պոլիսը ցարիզմն ի վիճակի չէր լինի՝ ներքաղաքական, տնտեսական գործոններով պայմանավորված: Ավելին, դա նրան չէին թույլատրի գաղութատեր պետությունները: Այդ իսկ պատճառով ռուսական դիվանագիտությունը ձգձգում էր մերձավորարևելյան խնդիրների լուծումը, մինչև «կավարտվեր սիբիրյան երկաթուղու շինարարությունը». այդ պահին միայն կբարձրացվեր արևելյան հարցը, և «Թուրքիան որպես հասած պտուղ կընկներ Ռուսաստանի ձեռքը»[49]:

Այսպիսով, Ռուսական կայսրությունը, հավատարիմ իր արտաքին քաղաքական ծրագրերին, 1890-ական թվականներին ուշի ուշով հետևում էր, իսկ իրավիճակից կախված՝ երբեմն էլ մասնակցում մերձավորարևելյան բոլոր խնդիրներին՝ միաժամանակ ակտիվ գործելակերպ դրրսևորելով Հեռավոր արևելքում: Ռուսական քաղաքականության այս երկու ուղղությունները ոչ միայն բևեռացած չէին, այլև սերտորեն փոխկապակցված էին: Ակնհայտ է, որ մերձավորարևելյան խնդիրներում ռուսական դիվանագիտության «տեղատվություններն ու մակընթացությունները» պայմանավորված էին միջազգային իրավիճակով ու մեծ տերությունների քաղաքական խաղերով: Դիվանագիտական զիգզագներում ուրվագծվում էր ռուսական քաղաքականության գերխնդիրը. գերիշխանության հաստատում Մերձավոր արևելքում ու նեղուցների մենիշխան վերահսկողություն, թեև այդ ժամանակ այդ ծրագրի իրագործման պահը դեռևս չէր հասունացել: Տարածաշրջանում հարկադրված զիջումների հետևանքով ցարիզմն իր հայացքն ուղղեց դեպի Հեռավոր արևելք, որն ի սկզբանե Ռուսաստանի համար թե՛ միջոց և թե՛ նպատակ էր՝ մերձավորարևելյան հարցը շահավետ լուծելու համար: Իսկ թե որքանով էր արդարացված ռուսական դիվանագիտության՝ Մերձավոր

[48] **Покровский М. Н.**, *Внешняя политика России в 20 в., М., 1926.*

[49] **Хвостов В.**, *նշվ. աշխ., էջ 103:*

արևելքում զիջումնային, զուսպ ու զգուշավոր, իսկ Հեռավոր արևելքում ակտիվ քաղաքականության մեթոդը, որքանով էր արդյունավետ նման գործելակերպը, պետք է ցույց տար ապագան։

БЛИЖНЕВОСТОЧНАЯ ПОЛИТИКА РОССИИ
(1890-е годы)

ТОНОЯН Г. М.

Резюме

Начиная с петровских времен Россия активизировала восточное направление своей внешней политики, пытаясь расширить свои границы на юг, закрепиться у берегов Черного моря, не скрывая своих истинных намерений овладеть проливами и Константинополем, достичь политического перевеса на Ближнем Востоке. Для осуществления же этих целей необходимо было завоевать Западную Армению, Малую Азию, территории, являвшиеся прямым путем к черноморским проливам. Указанные внешнеполитические задачи России сталкивались с интересами Турции и европейского концерта. Последний для сохранения политического равновесия на Ближнем Востоке поддерживал status quo Османской империи. В противовес европейской дипломатии царизм пересматривал свою дипломатичекскую тактику, но не традиционные внешнеполитические задачи, заняв в вопросе проливов нейтральную позицию и идя на сближение с Турцией. Стратегические перемены, имевшие место в царской дипломатии в 90-ых гг. XIX в., были обусловлены угрозой политической изоляции, формированием русско-французского союза и русско-английским соперничеством на Ближнем Востоке.